


## ՄԱՅՐ ԱԹՈՌ

Յունվարի 1-ին Նոր տարուայ առթիւ Մայր Տաճարում ներկայութեամբ Վեհափառ Հայրապետի հանդիսաւոր ս. պատարագ մատուցուեց: Պատարագիչն էր Տ. Բագրատեպիսկոպոսն: Տաճարը լի էր աղօթողների մեծ բազմութեամբ, դրանց մէջն էին քրդերի և տաճիկների արհաւիրքներից սարսափահար փախած դժբաղդ հայ գաղթականները, որոնց վրայ նայելով մարդ չէր կարող առանց արտասուքի աղօթել: Այդ օրը Տաճարի բոլոր աղօթողները, սկսած Վեհափառ Հայրապետից, առանձին խոր զգացմունքով լցուած, արտասուքը աչքերին, խորհրդաւոր կերպով աղօթում էին առ Աստուած, որ 1915 թ. վերջ դնի ազգերի կեանքը քայքայող և պատմութեան մէջ չհղած համաշխարհային սարսափելի պատերազմին և առանձնապէս վերջ տրուի հայի պատմական տանջանքներին, որ դարերից ի վեր նա կրում է: Պատարագից յետոյ Վեհափառ Կաթողիկոսի ներկայութեամբ կատարուեցին Կայսերական և ապա Հայրապետական դոհաբանական մաղթանքներ, որից յետոյ ամէնքն էլ համբուրելով Հոգեւոր Տիրոջ ս. աջը՝ Նոր տարուայ առթիւ ստացան Նորա հայրական օրհնութիւնը:

Վեհաբանում այդ օրը Վեհափառը բարեհաճեց ընդունել Ճեմարանի ուսուցիչներին, Սինօզի պաշտօնեաներին, Վաղարշապատի ու շրջակայ գիւղերի ժողովրդոց ու տեղական ծառայողների ներկայացուցիչներին, որոնց և իւր հայրական օրհնութեան հետ տուեւ է մի մի օրացոյց:

Նոր տարուայ ու Քրիստոսի Ծննդեան—Մկրտութեան տօների առթիւ Վեհափառը ստացել է բազմաթիւ շնորհաւորական և ներկայ ժամանակին համապատասխան բարեմաղթութիւններով ի հեռագրեր Կովկասի Տ. Փոխարքայից, բոլոր առաջնորդներից և փոխանորդներից, ազգային, եկե-



դեցական և բարեգործական հասաատութիւններից հայ կամաւոր զինուորների խմբապետներից, զանազան քաղաքների հայազգի ականաւոր անհատներից և այլն:

Յունվարի 5-ին ճրագալուցի երեկոյեան և միւս օրը 6-ին Վեհափառ Հայրապետի ներկայութեամբ մատուցուեց Մ. Տաճարում հանդիսաւոր ս. պատարագ: Զրօրհնեաց հանդէսը կատարեց օրուայ պատարագիչ Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեանը: Պատարագից յետոյ Քրիստոսի Ծննդեան—Մկրտութեան տօնի առթիւ ժողովրդոց ներկայացուցիչներն ընդունուել են Վեհարանում և ստացել Վեհափառի հայրական օրհնութիւնը:

Անցեալ դեկտեմբերի 24-ին Սարիղամիշում Ռուսաց քաջարի զօրքի ունեցած փառաւոր յաղթութեան առթիւ Մ. Տաճարում գոհաբանական ս. պատարագ մատուցուեց Վեհափառ Կաթողիկոսի ներկայութեամբ: Տաճարը լի էր աղօթողների մեծ բազմութեամբ: Պատարագից յետոյ, երբ Վեհափառը վերադառնում էր վեհարան—ժողովուրդը սրբատագին կէցցէներով ուղեկցեց Վեհափառին մինչև վեհարան: Ապա ժողովուրդը ժողովելով վեհարանի արևմտեան բակը՝ օրուայ ուրախութեան առթիւ բարեմաղթութիւններ արաւ Կայսեր, ամբողջ Կայսերական Տան, Տ. Փոխարքայի և Ռուսաց քաջարի զօրքի առողջութեան և յաջողութեան համար:

Վեհափառը բարեհաճեց դուրս գալ պատշգամբը և քաջալերական խօսքերով մխիթարեց զգացուած ժողովրդին: Բոլորը միաբերան «կեցցէ Վեհափառը» կոչելով, խնդրեցին իրենց կողմից իրենց հպատակութեան զգամունքները արկանել առ ռոս թագաւոր Կայսեր:



Ռուս-տաճկական պատերազմի պատճառով անցեալ դեկտ. 20-ից սկսած գաղթել են դէպի Երևանի նահանգը Տաճկահայերն և Պարսկահայերը: Տաճկահայերը գաղթել են Ալաշկերտի, Ղարաքիլիսայի, Դիարիքի և Բայազիտի կողմերից, որոնց մօտաւոր թիւն է 30 հազար: Իսկ Պարսկահայերը գաղթել են Սալմաստից, Ուրմիայից, Խոյից և Թաւրիզից, որոնց թիւն է մօտ 25 հազար: Տաճկաստանից գաղթածներն տեղաւորուել են էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Աղէքսանդրապօլի գաւառները հայաբնակ գիւղերում, իսկ Պարսկահայերը տեղաւորուած են Հին Նախիջևանի և Շարուր Դարալագեազի կողմերում: Բոլոր գաղթականներին խնամելու համար կան տեղական «Եղբայրական օգնութեան Յանձնաժողովներ» Վեհափառ Հայրապետի բարձր հովանաւորութեան ներքոյ: Ս. էջմիածնում Վեհափառի դեկտ. 28-ի կոնգակով\*) կարգուած է «Եղբայրական օգնութեան ս. էջմիածնի գլխաւոր կարգադիր Յանձնաժողով», որի անդամներն են Տ. Տ. Եփրեմ, Բագրատ և Մատթէոս եպիսկոպոսներ, Տ. Տ. Գարեգին, Բաբգէն և Վրթանէս վարդապետներ: Երևանի Յանձնաժողովը գործում է Տ. Խորէն եպիսկոպոսի նախագահութեամբ, Հին Նախիջևանի Յանձնաժողովը Տ. Ներսէս եպիսկոպոսի նախագահութեամբ, իսկ փոխ նախագահն է Տ. Սիօն վարդապետը, Աղէքսանդրապօլի Յանձնաժողովն էլ գործում է Տ. Արտակ վարդապետի նախագահութեամբ: Հնարաւոր չլինելով այս անգամ լրիւ տեղեկութիւններ հաղորդել ընթերցողներին առհասարակ գաղթականութեան և նրանց մեր կողմերում տեղաւորելու մասին՝ հետեւեալ անգամ կը տանք մանրամասն և հետաքրքրական տեղեկութիւններ:

Բ. Վ. Ա.

\*) Տես այդ կոնգակը ներկայ համարի պաշտօնական բաժնում: